



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2611.

Завроплакати 2.

Франкфурт Герм

9(47)

2-42

ՀԱՅ 2006

Ժողովրդական գրադարան „ՊԱՏՔԱՐ“

2011-07

Վ 3

Ա. Յարութիւնեան.

„Ով որ ճնշում է զաղափարները՝
նա ինքն իր անձն է կործանում“:

ԴԱՂԱՓԱՐԻ ՄԱՐԴ.

Ա. Կ. Պ.—ի.



Բաթում
Տպարան Ն. Պ. Գուրսկու:

1906

9(47)

3 - 42

11 JUN 2013

2611

3(47)
2-42



ԳԵՂԱՓԵՐԻ ՄԱՐԴԸ.

Արտաստանակում և „մասամբ“ մեզանում—
Ուստասառանում, լոյս տեսաւ, վերջապէս, Կալ-
եակի զորքի մանրամասն հաշիւը: Նորից հաս-
տառուեց այն մեծ ճշմարտութիւնը, թէ չկայ
ոչինչ ծածուկ, որ յայտնի չլինի: Բիւրօկրատի-
ան աշխատում է միշտ ծածկել հասարակական
կօնտրոլից առանձնապէս նրա ուշադրութիւնը
շղթայող խնդիրները, բայց այդ ջանքերը յաճա-
խակի, հետզհետէ, մէկը միւսի յետեկից ցիր ու
ցան են լինում, ինչպէս ծուխ, ինչպէս սապնի
պղպջակներ:

Դրա համար մնումէ միայն ուրախանալ.
Հասարակութիւնն ոչ միայն կարող է, այլ նա
պարտականէ իմանալ թէ ինչ է անուսմ, ինչ է
կատարուում իր շուրջը, և հասարակութեան այդ
լիակատար իրազեկութիւնն ՚ի դէմս երկրի շա-
հերի՝ անհրաժեշտէ, մանաւանդ այն երեսյթնե-
րի վերաբերմամբ, որոնք, իրեւ այլասերումն,
հետեանք են ուղղակի և անմիջական այն պրո-
ցեսների, որոնք կատարուում են հասարակու-

57206-66

թեան խաւերում և նրա սրտի խորհրդաւոր խորչից դուքս են ցայտկում երկրի գերազոյն լարուած մօմենտներում:

Մենք այստեղ չենք նկարագրիլ Կալեակի գործը ժամանակազրական հետեւողութեամբ, որովհետև մեզ համար բոլորովին կարևոր չեն դատավարութեան այդ մանրամասնութիւնները: Մեր նպատակը տարբեր է, այն է՝ բաց ոնել այդ գործի իսկական միտքը, ընդգծել նրա հասարակական նշանակութիւնը: Թոյլ ենք տալիս մեզ մտածելու, որ չի գտնուիլ Ռուսաստանում ոչ մի առողջ մտքով մարդ, որ լիակատար յիշողութեան և բանականութեան մէջ լինելով կարողանայ գէթ մի ըոպէ գտնել Կալեակի գործի մէջ անձնական շարժառիթ, անձնական գոյն:

Միտքը, բովանդակութիւնը, բաղաքական հասարակական բնաւորութիւնն այն գործողութեան, որ առիթ տուեց սենատի առանձին քննութեան նիւթ լինելու, 1905 թուականի ապրիլի 5-ին, աւելի ուժեղ և պարզ արտայալուած են Կալեակի տաղանդաւոր փաստաբանի՝ պլ. Մանղելշտամի ճառի մէջ:

Հինց այդ ճառից էլ մենք կ'սկսենք:

,Այդ մի տարի առաջ էր՝ սկսեց տաղանդաւոր փաստաբանը: — ,Զեր բազկաթոռների վերայ նստած էին պատերազմական զինուորական դատավարանի անդամները, իսկ մեղադեալ-

ների նստարանների վերայ - մարտական կազմակերպութիւնը: Գերշուցին բացատրութիւններ էր տալիս: Խօսքը սօցիալիստ-յեղափոխական կուսակցութեան և մարտական կազմակերպութեան մէջ եղած յարաբերութիւնների մասին էր: Կենդրոնական կօմիտէն, ասում է նա, — նպատակ է դրել բարձր դասակարգային պաշտօնեաններին, որոնց վերայ մարտական կումմակերպութիւնն իրաւունք ունի սպանութեան փորձեր անելու: Այդ սահմանում նա գործում է միանգամայն ազատ և ինքնուրոյն, իր պատասխանատութեամբ:

— ,Այժմ ինչ աստճանի և ինչ զիքքի պաշտօնեանների վերայ նա որոշել է ոպանութեան փորձեր անելու: — հարցէ տալիս նախագահը: Մի զեզմանական լուսական մէջ, որ կարելի էր, մինչև անգամ, ճանճի զզոցն անգամ լսել ամբողջ դանիճի այդ ընդհանուր լարուած զրութեան պահուն, իր յստակ մետալական ձայնով, լւրաքանչիւր խօսքը շեշտելով, Գերշունին պատասխանում է. , Քոլորի վերայ, բայց թագաւորական տնից: Երեք անգամ կը ըկնուեց այս հարցը և երեք անգամ էլ պատասխանեց Գերշունին. , Առայժմ որոշուած է՝ թագաւորական տանը ձեռք շտալ: Այդ , առայժմը՝ այդպէս էլ մնաց կախուած անորոշութեան մէջ, բայց նա մնաց, ինչպէս մի մշտական սպառնա-



57206-66

լիք։ Անցաւ մի տարի և այդ „առայժմը“՝, պոկեկաւ իր հանգոցից և իր բոլոր ծանրութեամբ ընկաւ մեծ իշխանի կառքի տակ։

,Ինչու, ինչ պատահեց։ Կուսակցութիւնը փոխեց իր որոշումն՝ թէ յանձին Սերգէյ Ալեքսանդրովիչի՝ նա տեսաւ, ամենից առաջ, Մոսկու այի գեներալ-նահանգապետին՝ յետադիմական կուսակցութեան տոկուն գործիչին, և առաջ յետոյ՝ մեծ իշխանին՝ թագաւորական տան անդամին։ Գեներալ-նահանգապետի իշխանութիւնն ամենաբարձր իշխանութիւնն է ժողովրդին մօտ եղած բոլոր իշխանութիւններից, երբ նա տարածում է ոչ թէ մի ամբողջ երկրի, կամ աւելի ճիշտն ասած, ոչ թէ մի ամբողջ նահանգի, այլ մի քաղաքի վերայ, —կարելի է համարձակ ասել, որ չկայ ժողովրդական կեանքի մի այնպիսի կողմը, որ այսպիս թէ այնպէս առնչութիւն չունենայ Գեներալ-նահանգապետի բացառիկ, յաճախաչի ապօքինի լիազօրութիւնների հետ։ Այն բոլորը՝ ինչոր կատարում էր մայրաքաջաքռմ՝ կատարում էր նրա ազգեցութեամբ, նրա անունից, նրա իշխանութիւնով։

,Փակւում է մի գիտական ընկերութիւն — ով է մեղաւոր։ Զեմստվայի կամ զումայի վճիռները մերժուումն, անհետեանք են թողնում, ում վերայ են տեղում մեղաղբանքներ — դենե-

րալ-նահանգապետի։ Տասնեակներով ուսանողներ են աքսորում — ում հրամանով։ Ճնշում են աշակերտական խաղաղ ցոյցերը — ում անունով։ Հրատարակում են բացառիկ օրէնքներ — ում ազգեցութեանն է վերակրում այդ արտաքոյ կարգի միջոցները։ Միշտ, ամեն տեղ և ամեն բանի մէջ գեներալ-նահանգապետն է։ Եւ շատ բնական է, որ այդպիսի ուժեղ և մի անգամայն բացառիկ իշխանութիւնը, ունենալով օրինական հնարաւորութիւն՝ խախտէ քաղաքացիների տարրական իրաւունքները, առաջ բերէ մշտական անբաւականութիւններ և մշտական պառակտումն ժողովրդի մէջ։ Կեանքի սովորական պայմաններում արդ անբաւականութիւնն առժամանակ իրեն ելքը բողոքելու մէջ է գտնում, որքան էլ թոյլ, որքան էլ խարուսիկ, որքան էլ յոյս չէ ունենում յաջողութեան վերայ, որքան էլ դժուար է լինում կառավարութեան պղեստիժի դէմ կըռուելը, որքան էլ այդ բոլորը, այդ բողոքելու իրաւունքը թղթի վերայ է մատսմ, գաղափարի մէջէ մեռնում։ Բայց երբ գեներալ-նահանգապետը թագաւորական տնից է, երբ նրա անձի մէջ ժողովորդը տեսնում է, ,թագաւորի հօրեղբօրն և բարեկամին«, այն ժամանակ ամեն մի օրինական պայքար իշխանութեան հետ տնհասկանալի է դառնում։ Դուք լսեցիք մեղաղբեալի պատմութիւնը, — նրա ասելով, մինիստրութեան մէջ չէին քաշում ուղ-

զակի և բացարձակ յայտարարել. „Մոսկուայի վերայ մեր իշխանութիւնը չէ տարածւում։ Մոսկուան — առանձին իշխանութիւն է։ Զէ որ Մոսկուան մայրաքաղաք է, արդիւնաբերութեան մի ահազին կենդրոն, կիւլուրական կեանքով զարգացած մի հսկայ քաղաք, միլիոնաւոր բնակիչներով։ Նա չէր կարող հաշտուիլ իր այդ բացառիկ դրութիւնով, նա չէր կարող հաշտուիլ իր պավենական կալուածքի այդ ապօրինի դրութեան հետ։ Եւ ահա զժգոհութիւնն աճում է, չփանելով իրեն օրինական մի ելք, զիգուելով, ինչպէս զիգուում են զոլորշիները, ամուր ծածկուած կաթսայի մէջ։

„Հասարակական կեանքն առաջ էր գնում, մասնաւորից անցնելով ընդհանրակալին, տեղական կեանքից՝ կենդրոնականին։ Ժողովուրդը տեսնելով իշխանի հայեածքների արտայայտութիւնը՝ մայրաքաղաքի ամենօրեայ կեանքում, զգալով իր վերայ նրա համակրութիւնն ու հակակրութիւնը՝ նա ընդհանուր պետական քաղաքականութեան այս կամ այն ընթացքը վերակրում էր նրա ազգեցութեան։ Հասարակութիւնը տեսնում էր, որ Սերգէյ Ալքսանդրովիչի ամենամօտիկ աշխատակիցները, որ պետութեան մինխտութեան մէջ պատասխանատու պաշտօններ էին վարում, թէ ինչպէս անտեղից, բիւրօկատիչ խորացած էին առաջ գալու առաջարկութեան մէջ։ Մարտական կազմակերպութիւնն ինքն չէր վերակայի առաջարկական բոլոր կուսակցութիւններից — նետել էր իրեն նրանց մրցման մէջ։ Մարտական կազմակերպութիւնն ինքն չէր վերակայի առաջարկական բոլոր կուսակցութիւններից — ոչ։ Մեծ իշխանն ինքն էր գահից ցած իջել կեանքի խորը, ուր լաւում էին կուուկ ճիշերն ու յաղթուածների հառաջանքները, որպէսզի այնտեղ հանդիպէ, երես առ երես մարտական կազմակերպութեան։

Ըիայից հեղեղում էին ամբողջ Ռուսաստանը իշխանութեան. սոսկալի պրօէկտոներով, գասակարգային առանձնաշնորհումներով, հասարակական մտքի ու ինքնազործունէութեան ճնշումներով։

„Միպիազինը, Բագալէպովը և զրանց նըման ուրիշ շատ շատերը, թէ ոչ այնքան յայտնի — որոշ զէմքեր են։ Այս բոլորը կապուեցան մեծ իշխանի անուան, նրա հեղինակութեան հետ, և հասարակութեան գաղափարը կամաց կամաց ընտելացաւ տիսնեցու յանձին մեծ իշխանի մի որոշ կուսակցութեան պարագլիսին և նրա իդէալների ջերմ մըցողին պաշտպանին։ Թագաւորական տան անդամը, որ պետական գաղափարով պիտի, ինչպէս արեգակ, բարձր վայլ էր քաղաքական բոլոր կուսակցութիւններից — նետել էր իրեն նրանց մրցման մէջ։ Մարտական կազմակերպութիւնն ինքն չէր վերակայի առաջարկական բոլոր կուսակցութիւններից — ոչ։ Մեծ իշխանն ինքն էր գահից ցած իջել կեանքի խորը, ուր լաւում էին կուուկ ճիշերն ու յաղթուածների հառաջանքները, որպէսզի այնտեղ հանդիպէ, երես առ երես մարտական կազմակերպութեան։

„Բայց ինձ ասում են, որ սպանութիւնը — միշտ էլ սպանութիւն է, մարդկային կեանքը ՚

վերուստ չնորհուած մի բարիք է, որի վերայ ոչ
որ—ոչ անհատը, ոչ հասարակութիւնն իրաւունք
չ'ունեն ձեռք բարձրացնելու։ Փրանսիական պո-
լիցեան կալանտուրութեան համար մի յայտնի
ծաղրաբանական ձև ունի. ադառութեան անունով
ևս ձեզ կոլանաւորում եմ։ Մեղաղըող իշխա-
նութեան ներկայացուցիչը մեր այս գատական
պրօցէսում ուրիշ կերպ է վարում։ յանուն
թանգակին կեանքի նա մահ է պահանջում։ Պա-
րոն սենատորներ, պարոն դասակարգացին ներ-
կայացուցիչներ, քաղաքական սպանութիւններ
միշտ և ամեն տեղ եղել են։ Զկայ պետական
մի այնպիսի կադմը, չկայ իշխանութեան մի
այնպիսի ձև, որ դրանից ապահոված լինի։
Կարնոյի եղերական մահր, Կլէվինտայի սոսկա-
լի իիճակը,—երկու դեմոկրատ հասարակապե-
տութեան նրկայացուցիչների,—ահա դրա ամե-
նափայլուն ապացոյցը։

,Բայց այնտեղ, ուր այդպիսի սպանու-
թիւնները, մտքերի լարուած լինելու պատճա-
ռով ընդհանուր զժոհութիւններ չեն յարացա-
նում, այնտեղ, ուր զդայնութիւնը չէ թափան-
ցում ամբողջ հասարակութեան մէջ, բարձրից
սկսած մինչի ստորին խաւերը, այնտեղ, ուր
չկան ներքին յուղումներ, —այնտեղ քաղաքական
սպանութիւնն երեան է զալիս իրեւ մի պատա-
հական—բացառիկ երեոյժ։ Ոքան էլ ուժեղ

լինի կազմակերպութիւնը, ոքան էլ նա բազմա-
թիւ անգամներ ունենայ, այնուամենայնիւ նա
չէ կարող երկար ժամանակ սնուիլ իր սեպհա-
կան հիւթով։ Նրան սմնհրաժեշտ է անդադար
իր մէջ նոր ոյժերի հոսանք ընդունել, նրան
անհրաժեշտ է անդադար փոխանակութիւն նոր
նիւթերի երկրի բոլոր կենսունակ տարրերից։
Հակուակ դէպքում—քաջքայաւում և մահ է։
Մի խռովութիւն, որ չէ յենուած ընդհանուր
յուղումների վերայ,—քաղաքական գաւաղրու-
թիւն է։ Այն խռովութիւնն որ իր բարձրագոյն
սանկցիան ստանում է ընդհանուր յուղումների
մէջ,—յեղափոխական կուսակցութիւն է,

,Պայքարը, զուտ արտաքին պայքարը, քա-
ղաքական դաւաղրութեան ընաւորութիւն կըող
պայքարը բէպքէսիւ (բռնի) միջոցներով մնշելը —
հեշտէ. խսկ յեղափոխական կուսակցութեան պայ-
քարը՝ մինչև անգամ այն սոսկալի մահուան պատիժ-
ներով, որոնք կան միայն կառավարութեան տրա-
մադրութեան տակ—անկարելի։ Եւ կառավա-
րութեան առաջին խնդիրն է, —որոշել, թէ ում
հետ նա զործ ունի. յանձին դաւաղրութեան
խռովարարների թէ յեղափոխական կուսակցու-
թեան, որ յենուած է յուղումների վրայ։

Բայց ամենից առաջ պէտք բացատրել թէ
ինչ է նշանակում „յուղում“։ Այժմ, երբ այդ
խօսքի հետ ճարպիկ կերպով խաղում են, ինչ-

պէս խաղագնտակի, երբ յետագիմական մամուլը փրփուրը բերանում պահանջում է սանձահարել—զսպել այդ „յուզումներն“, այժմ աւելի անհրաժեշտ է, քան երբ և իցէ, կառավարութեան առաջ զնել ամենայն ճշութեամբ և պարզութեամբ երկրի յուզման այդ հարցի բացատրութիւնը:

„Գարնանը նայեցէք բնութեան: Ահագին աղմուկով, ճարճատումով զետերը փշում են իրենց սառուցէ շղթաները, լեռնային վտակները փրփրալով ու պճաճալով զլսի վայր թռչում են ցած, զետերը գուրս են զալիս իրենց ափերից, կատաղի ալիքներով ծածկում են ահագին տարածութիւններ—զա բնութեան յուզումն է: Գուցէ նա աւեր է և խաղաղ բնակիչների մի քանի խրճիթներ, գուցէ նրա սառուցների մէջ նահատակուին և մի քանի անմեղ զոհեր, բայց կ'անցնի մի ամիս, երկու ամիս—և ջուրը բնութեան նոր կեանք տալով, նոր ճանապարհներ բանալով, կիսաղաղուի, կհանգստանայ իր ափերում, երկիրը կծածկուի կենդանի կանաչներով և բոլոր բնութիւնը կփայլէ նոր ոյժով: Բայց փորձեցէք շղթայել սառոյցը, արգելել լեռնային վտակները և բնութիւնը խոռվարար կդառնայ:

„Այդ միենայնը մենք տեսնում ենք հասարակական կեանքի մէջ: Հասարակական յուզում—զա նոր ոյժերի արտայայտութիւնն է, զա—ապատագրական գաղափարների յաղթական եր-

գըն է: Եթէ կտուավարութիւնը նըան ընդ առաջ երթայ, հաւատալով նոր ոյժերին և աշխատելով նըանց խնամքով կեանքի մէջ մտցնելու, շատ չի անցնել, նոր հոսանքները կպարզուին, կհանգստանան, կիսաղաղուին, ամբողջ երկիրը կփայլէ շտեսնուած փայլով և կ'կանգնէ զարմացած աշխարհի առաջ նոր ոյժով: Բայց փորձեցէք այդ յուզումների առաջն առնել, փորձեցէք ըէակցիայի կապարէ ձեռքի զնել հասարակական կեանքի ամեն մի արտայայտութեան վերայ, — դուք կը ճնշէք խաղաղ ցոյցերը, դուք կ'արձակէք գիտական ընկերութիւնները, դուք կփակէք աղատազրական թերթերը, բայց դուք վրանովյուզումները ժողովրդի օրգանիզմի մէջ աւելի խորը կմտցնէք և երկիրը ձեզ կպստախանէ աւելի հուժկու խռովութիւններով: Պաւել կայսրն ասաց. „Ես ունիմ յանձին ազնուականների 40,000 ձրի ոստիկանապետներ“: Ոչ թէ 40,000—այլ քառոսուն միլիոն ձրի ոստիկանապետներ են հարկաւոր, որպէսզի տամուր մնայ պետական կազմը, պէտքէ որ բոլոր հասարականութիւնն ինքն զնահաաէ իր կարգապահութիւնը, պէտքէ որ կառավարութիւնն ունենայ ոչ միայն ոյժի հեղինակութիւն, այլ և հեղինակութեան ոյժ:

„Հարկաւոր է, որ ամեն մի մարդ կարողանայ ասել՝ պետութիւնը—այդ ես եմ, որ ամեն մի շարամիտ փորձի մէջ զէպի պետական կարգը՝

նա զգայ, որ խախտում է ինքն իր իրաւունքը։ Դուք մի՛ կարծիք, որ եթէ քրէական յանցանք ները պատժում էք, դրանով պարտական էք ոստիկանութեան, տաժահակիք աշխատանքներին, բանդիքին։ —ոչ Այդտեղ, այդ պայքարի մէջ, զուք յենւում էք հասարակական կարծիքի ոյժի վերայ, նրա դատապարտութեան ամբողջ հեղինակութեան վերայ։ Առանց դրան ամենալաւ պօլիցեան — միայն այնքան թանգակին զուք է, որքան անպէտք ու անշնորհք շինովնիկները։ Տարօրինակ չէ։ Գուք Կալեակին պահում էք ձեր ձեռքերում, բանդիքերում նրա լուսանկարներն ունիք, պօլիցեայի դեպարտամէնտում նրա անցեալի մասին ահապին նիւթեր ունիք և զուք տակտին անզօր էք հաստատել նրա ով լինելը։ Մարդս ասեղ չէ, Կալեակը իր թափառական կեանքում հարիւրաւոր ծահօթներ ունէր, նըրանք չին կարող չնկատել նրա անյայտանալը։ Եւ ոչ ոք մատ-մատին չխփեց ձեզ օգնելու համար։ Սա սոսկալի մի սիմպում (ախտանիշ), սա սարսափելի մի նախազգուշացզումն է։

,,Մեր ներքին քաղաքանկանութիւնն ոչ միայն ստեղծում է յեղափոխական կուսակցութիւններ, այլ նա առանձին խնամքով հրավուրում է նորակոչներին յեղափոխական կոռու համար։ Կարդացէք զուք՝ Սաղօնովի, Կալեակի, Գեղշունիկի կենսազրութիւնները. դրանց անունները զու,

Տէք, անմահ պահիք։ Միթէ ձեզ չի թւում, որ այդ մարդիկ լոլորն էլ զարբնուած են մի մուրճով։ Հրէայ Գերշունին՝ Ռւֆիմսկի ատաղձավաճառի որդի, Սաղօնովի՝ թաղական ոստիկանական պաշտօնեայի որդի, Կալեակը, —, Ինչպիսի խարնուրդ՝ հազուստների, անունների ու զէմքերի, ցեղերի, կոչումի, դասակարգերի։ Եւ մինչդեռ, երբ զուք կարգում էք դրանց կենսազրութիւնը, կարծում էք թէ միենոյն հեղինակի պատմութիւնն էք կարգում։ Զնչեցէք անունները. և զուք կարող էք դրանից տպազերել բլանկներ մարտական կազմակերպութեան պնդամների կենսագրութեան համար։

,,Առաջին անգամ մինք ծահօթանում հիք Կալեակի հետ 1899 թուին։ Մենք նրան պատահում ենք Պետերբուրգի ուսանողների ժողովներում։ Նա ապրում էր ընդհանսւը մարդկութեան բաղդաբութեան ոչ մի բանով տակալին շմթնազնած՝ պայծառ երազների, ձգտումների շշանում։

,,Նա ամբողջապէս ուսանողական ընկերութեան ընտանիքում, մեր տաք գլուխ, աղնուասիք և նորահաս երիտասարդութեան չըջանումն էր։ Եւ ահա մի օր, կամ աւելի ճիշտն ասած, մի անգամ զիշերը իշխանութիւնը բազմում է ուսանողի մեկուսացած սենեակի զուռը։ Կալեակին կալանաւորում են։ Բանդ. Հրա-

պարակական հակողութիւն են նշանակում նրա
վերայ Եկատերինօսլաւում։ Տեղական ժանդար-
մեական վարչութիւնից հաղորդագրութիւն է
ուղարկում ոստիկանական գեպարտամենտը,
որ Կալեան կասկածանքի տակ ընկած մարդ-
կանց հետ կապեր ունի։ Միթէ դրանից զուրս
մի ուրիշ բան կարելի էր սպասել։ Վերցնում են
կը կոտ երիտասարդին, զուրս են քաշում նրան
իր սովորական շրջապատից, հասարակական
ցաւերով լցուած սրտով, տենդային աշխա-
տանքով բռնուած զլխով, որ աշխատում էր լու-
ծել հասարակական մեծ պրօբլեմներ։ Հոկողու-
թեան ենթարկուած Կալեանի համար, որ զըր-
կուած էր ընկերական շրջանից, քաղաքականապէս
անվտանելի Կալեանի համար՝ փակում են հա-
սարակական լեզար զորդունէութեան դռները։
Նա ընկնում է անլեզար զորդունէութեան մէջ։
25 որ, սա դէպերի մի տրամաբանական հետև-
անք է, — մի մատիմատիկան ակսիօմայ։

Սկսում է կալանաւորումների մի ամբողջ
շաբթ։


, Կալանաւորում է Կալեան։ Կալանաւ-
որում է նա Միկողիայում և յանձնում ուսաց
կառավարութեան, արգելուած զըրեր կարգալու
համար։ իսկ մեզանից ով չէ այդ անում։ — Կալ-
եանին կըկին բանդ են նատեցնում և հինգ
տարով արգելում նրան Ռուսաստանի խոշոր

կենդրոնները զնալու։

, Խեղճ երիտասարդն ամբողջապէս կլանու-
ած ջերմ զաղափարներով, ձգտում է դէպի լոյս,
դէպի եռուն զործունէութիւն։ Նրան հրապուրում
է մայրաքաղաքը, ուր „որոտում էին պերճա-
խօսութիւնները, եռում էր զաղափարական պայ-
քարը“, իսկ նա ստիպուած էր իր ժամանակը
մեռցնել մի ինչ-որ Վալօգդայում։ Մի ելք էր
ամուռման—արտասահման։ Եւ ահա, Կալեան եր-
ջկու տարով անհետանում է։ Նրան կորցնում
էն՝ կառավարութիւնը, ծանօթները, մինչև ան
օդամ, իր ընտանիքը, բայց յանկարծ նա երեան
206 զալիս ժողովրդի վրիժառուն, — նրա ասելով, —
Կայդ հսկայ դէմքը, ոռւմբը ձեռքին, մեծ իշխանի
կառքի առաջ։

, Ճնշող զգացումների տակ ես վերջաց-
նում եմ իմ պաշտպանութիւնը.... Եւ ոչ թէ նրա
համար, որ ինձ վիճակուած է խօսել գրեթէ կա-
ռուցուող էշաֆօտի հանդէպ—ոչ. յոյսն երբէք
չէ կորցնում մարդուն։ Բայց մեր զըրութիւնը
նրանով ծանը է, որ մեղաղը ուղը յայտարարեց
անդրդուելի պահանջ, որ մենք ոչ մի բառ
չ'ասենք նրա անձի պաշտպանութեան համար։

, Մեր աշքի առաջ մարդ իրեն ջուրն է
ձգում ու ջրահեղձ լինում և մենք իրաւունք չ'ու-
նինք մի շարժում անելու, իրաւունք չ'ունինք
նրան օգնութեան ձեռք մեկնելու։ Եւ սինչդեռ



մենք, վաստաբաններս, յանձին մեղաղը և ալի տեսնում ենք, ոչ թէ մի ոճագործի, այլ մի զափարական մարդու։ Մեր առաջ բացւում է ոչ միայն բանդարկեալի սենեակի դռուն, այլ և բանդարկեալի սիրտը։ Եւ այնտեղ, ուր դուք միայն դատում և պատժում էք, մենք հասկանում եւ սիրում ենք։

Դրա համար իմ ճառի մէջ չկան խօսքեր, որպէսզի կարողանամ ձեզ հաղորդել վըդովմունքի բոլոր ծանրութիւնը, ծանօթացնել նրա կեանքի հետ, երբ նա արդէն դատապարտուած է մահուան։ Ցանկանում եմ կոռւել մինչև վերջին հնարաւորութիւնն, ինչպէս էլ որ լինի։ Բայց ես իմ կրշման, որ ես կրում եմ, ինձ անարժան կհամարէի, եթէ, հակառակ Կալեակի կամքի, ես ինձ ձգէի նրա և նրա վիճակի մէջ։ Նա ինքը մերկացը իր կուրծքը, զնելով ձեր հարուածների տակ։ Նրա ցուցմունքները չնշում էին ինչպէս մի յանդուգն մարտակոչ և շպրտում մահուան երեսին, բայց պարօն նախազահին այդքանը բաւական չէր, նա ցանկացաւ հարց տալ թէ՝ Կալեակը նորից մահուան փորձ կանէր արդեօք, եթէ նրան յաջողուէր մի կերպ ազատուել պատժից։ Կալեակը պատասխանեց։ Պարոններ, ձեր առաջարկածը դատաւորի հարց չէ, այլ խոստովանահօր, և դուք դուրս ձգեցէք նրան դատական նիւթից։

Պարզաբանելու համար անհրաժեշտ է յիշեցնել, որ այդ հարցին ն. Պ. Կալեակը նախազահին պատասխանեց. „Ես կատարեցի իմ պարտքը. և կարծում եմ, որ այսուհետև էլ կկատարէի։ Այս պատասխանը տալով—ուզում եմ ասել, որ ես նորից այդ կկատարեմ։”

Սրտասահմանի լրագիրներում իր ժամանակին մահրամասն տեղեկութիւններ կար, թէ ինչպէս Կալեակին մահուան դատապարտեցին և թէ ինչպէս նա մեռաւ։

Մահուան դատավճիռը նրան յայտնեցին մահից երկու ժամ առաջ։ Նրա երեսի վերայ ոչ մի մկանունք չշարժուեց։ Դատախազը նրան մի խնդիր տուեց ստորադրելու ներում չնորհելու համար։ Կալեակը բացարձակ կերպով հրաժարուեց դրանից և խնդրեց, որ իրեն թէյ և կերակուր տան։ Դատախազը դուրս դնաց, բայց ուժանգամ ներս մտաւ և աղաչեց Կալեակին ստորագրել խնդիրը, բայց Կալեակը ամեն անգամ կտրուկ կերպով հրաժարուեց։

Իր մօտ զնացած հոգեորականին նա խնդրեց հեռանալ, յայտնելով, ոչ նա ինքն իր ներքին գաւանանքն ունի, որ իր խիդճը մաքուր է, որ նա ինքը համոզուած է, որ ոչինչ վատ բան չի արել։

Բանդի սենեակից Կալեակը դուրս եկաւ այնպէս հանգիստ, այնպիսի հաւատով, որ կար-

ծես թէ զբօսնելու էր գնում: Այդպիսի երկաթէ հանգստութիւն երբէք չէին տեսած բանդի իշխանաւորները:

Մահից առաջ ասաց իրեն մօտ կանգնած սպային.

— Ասացէ՞ր իմ բնկերներին, որ ես մեռնում եմ սիրով և ընդ միշտ կլինիմ նրանց հետ:

Կալեակը մօրից երդման խօսք առաւ, որ նա ներում չի խնդրել իրեն համար:

Երբոր վերջին մի տեսակցութեան ժամանակ, մի անդամ, մայրը նրան հաղորդեց տարածուած այն յուրերի մասին, որ իրը թէ նրան ներումն էն չնորհելու, նա անմիջապէս զրբեց արդարադատութեան մինհստրին.

,,Ինչպէս յեղափոխական, հաւատարիմ աղդային ադատութեան կուսակցութեան ուխտին, ես իմ քաղաքական խղճի պարտըն եմ համարում հրաժարուիլ ներումից“:

Դատարանում լսելով իր մահուան դատավճիռը՝ Կալեակը ասաց դատաւորներին:

— Քաջութիւն ունեցէք իրագործել այդ վճիռը այնպէս բացարձակ, հրապարակով, ինչպէս ես իրադործեցի կուսակցութեան դատավճիռը:

Մահից առաջ Կալեակը զրեց մի նամակ հետևեալ բովանդակութեամբ. ,,,նամակ բարեկամներին“.

,,Իմ թանկագին բարեկամներ և անմոռա-

նալի ընկերներ, դուք գիտէք. ես կատարեցի բարորը, ինչոր կարող էի՝ վիտրուարի 4-ին յաղթութիւն տանելու համար: Եւ ես—իմ անհատական հոգեկան գոհունակութեան մէջ՝ ինձ բաղդաւոր եմ զգում այն գիտակցութեամբ, որ ես կատարեցի մի պարոք, որ ամբողջապէս դրուած էր արիւնաքամ Ռուսաստանի վերայ:

Դուք գիտէք իմ համոզմունքներն և իմ զգացմունքների ոյժը, և թող ոչ ոք չտիրէ իմ մահուան համար:

Ես ամբողջովին ինձ նուիրեցի կռուի գործին ճնշուածների և հարատահարուածների աղատութեան համար, իմ կողմից ինքնակալութեանը և ոչ մի ակնարկ, մի որ և է զիջումի համար՝ չի կարող լինել, և եթէ, վերջն իմ կեանքի բոլոր ձրտումների մէջ ես երեամ ընդհանուր մարդկային արժանաւոր բարձրութեան վերայ ընդդէմ բրոնակալութեան, այն ժամանակ, թող իմ մահը պասկէ իմ կատարած գործը մաքուր գաղափարով:

Մեռնել համոզմունքի համար—ճնշանակում է կրիւ յայտարարել, որքան էլ որ զոհարերութիւններ պահանջելու լինի միապետութեան անկումն, և ես խորապէս համոզուած եմ, որ մեր ներկայ սերունդը նրա հետ ընդմիշտ իր հաշիւը կտեսնէ: Այդ կլինի ամենափայլուն յաղթանակը սօցիալիզմի, երբ ուսւ ժողովրդի առաջ կբացուի կեանքի նոր ասպարէզ,

ինչպէս և նրանց բոլորի առաջ, ով զգացել է իր վերայ նոյն յաւիտենական ճնշումներն.... բըռնութիւնները....

Ամբողջ սրտով ես ձեզ հետ եմ, իմ քաղցր, թանկադին և անոռուանալի բարեկամներ: Ծանր բոպէներում դուք էիք իմ զօրավիճն, ձեզ հետ էի ես միշտ բաժանում իմ և ձեր բոլոր ուրախութիւններն ու յուզմունքները, և եթէ մի օր, բնդիանուը ժողովրդական հրճուանիրի յաղթանակի բարձրութեան վերայ՝ դուք ինձ յիշէք, այն ժամանակ, թող իմ բոլոր աշխատանքը յեղափոխականի՝ լինի ձեզ համար մի խանդավառ սիրոյ արտայայտութիւն դէպի ժողովուրդը և մի փառահեղ յարգանք դէպի ձեզ. բնդունեցէք այդ իրքեւ մի զրաւական իմ անկեղծ անձնուիրութեան դէպի կուսակցութիւնը՝ ժողովրդի ազատութեան ուխտն իր վերայ կրողից, իր ամենալայն նշանակութեամբ:

Ամբողջ կեանք ինձ մի հերիաթ է թւում, կտրծես այն բոլորը ինչ որ պատահեց ինձ հետ՝ ապրում էր մանկական հասակիցս նախազգացումներիս մէջ և աճում սրտիս խորքում միայն նրա համար, որպէսզի յանկարծ ատելութեան և վրէժի բոցի փոխուի բոլորի համար:

Ես կցանկանալի վերջին անդամ, իմ սրտին մօտ և անոահման թանկադին շատերի անունները տալ, բայց թող իմ վերջին հառաջանքը լինի

նրանց բոլորի համար իմ ուրախ հրաժեշտի սիրոյ ողջոյնը և խիզախ հրաւերը գէպի ազատութեան գործը: Դրկում և համբուրում եմ ձեզ բոլորիդ: Զեր իւլին Կալեակ:

Եւ Կալեակին կախեցին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0411460

Ժողովրդական պբաղարան „ՊՅՅԱՐ“

Լոյս Են տեսել

- | | | | | | | | | | |
|----|----|--------------------------|----------|-------|---|---|---|----|---|
| 1. | Վ. | Գարշին—Ազգանշան | . | . | . | . | . | 10 | կ |
| 2. | Ի. | Միլով—Խնչ է՝ Սպատութիւնը | . | . | . | . | . | 10 | կ |
| 3. | Ս. | Կ. | Գաղափարի | մարդը | . | . | . | 5 | կ |

Պատրաստութիւն Են տպագրութեան
Համար

- | | | | | | | | | | |
|----|----|--|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ա. | Շինհննկայիս—Խնչ է՝ Հասարակութեանութիւնը | . | . | . | . | . | . | . |
| 2. | Ա. | Էջոնտե—Իրաւունքի Հաւասարութիւնը | . | . | . | . | . | . | . |
| 3. | Ն. | Վերնէր—Ուր է տանում Հասարակութեագործումն | . | . | . | . | . | . | . |
| 4. | Փ. | Լամինէ—Ժամանակակից սորկութիւնը | . | . | . | . | . | . | . |